ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԴԻՆԱՄԻԶՄ

Հասարակական հարաբերություններին զուգահեռ՝ զարգանում է նաև իրավունքը, փոխվում իրավաընկալումը, հետևաբար, առաջանում են **նոր իրավունքներ** կամ գոյություն ունեցող իրավունքների վերաբերյալ **նոր ընկալումներ (բովանդակություն).** չէ որ իրավունքը դինամիկ երևույթ, կենդանի օրգանիզմ է:

Նորմատիվ հարթությունում **իրավունքի դինամիզմին** է անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ), մասնավորապես՝ երբ որևէ նորմի (կոնվենցիոն դրույթի) վերաբերյալ նոր մեկնաբանություն է ներկայացնում, ՄԻԵԴ-ը նշում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան **կենդանի փաստաթուղթ** է[1], որը պետք է մեկնաբանվի **փոփոխվող սոցիալական, իրավական և տեխնոլոգիական պայմանների** լույսի ներքո, որպեսզի այն լինի **գործնական և արդյունավետ**: Իրավունքը բնորոշելով որպես «կենդանի օրգանիզմ»՝ դրանով իսկ հիմնավորվում է իրավունքի նորովի ընկալումը, այդ թվում՝ օրենքի **նորովի մեկնաբանումը՝** միևնույն ժամանակ հիմնավորելով նույն նորմի վերաբերյալ նախկինում տրված այլ մեկնաբանությունները (իհարկե, նպատակահարմարությամբ չպայմանավորված), ինչը և ապացուցում է իրավունքի դինամիկ լինելը:

Համանման բովանդակությամբ կարգավորում առկա է նաև ՀՀ իրավական համակարգում: Մասնավորապես, **«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի[2]՝**

---

[1] Տե՛ս ECtHR Judgement Tyer v. The UK, 25.04.1978, paragraph 31, ECtHR Judgement Burghartz v. Switzerland, 22.02.1994, paragraph 28, ECtHR Judgement Kress v. France, N 39594/98, paragraph 70, ՄԻԵԴ վճիռ Բայաթյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ 23459/03, պարագրաֆ 62:

[2] 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով և լրացումներով ներդրվեց **«սահմանադրական օրենք»** ձևակերպումը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը **սահմանադրական օրենքներն** են (...):

✓ 68-րդ հոդվածի 16-րդ մասի 2-րդ կետի համաձայն.

«16. Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված **որոշումները** (…) համապատասխան դիմումի հիման վրա **կարող է վերանայել**, եթե՝ **ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում,** որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի **սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն**:»:

✓ 68-րդ հոդվածի 9-րդ մասին 1-ին և 2-րդ կետերի համաձայն.

«9. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1. վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը **Սահմանադրությանը համապատասխանող** ճանաչելու մասին.

2. վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը **Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող** ճանաչելու մասին.

(…):»:

✓ 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«(…) կարող է վիճարկվել Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով[3] նախատեսված ինչպես **նորմատիվ,** այնպես էլ **անհատական բնույթ ունեցող իրավական ակտերի սահմանադրականությունը**, (…):»:

Այսինքն՝ «**սահմանադրական օրենք**» ասելով անհրաժեշտ է հասկանալ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասում նշված **7 իրավական ակտերը:**

[3] Ըստ ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է **օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի** համապատասխանությունը Սահմանադրությանը:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը իրավասու է (կարող է) վերանայել իր՝ նախկինում կայացրած որոշումները հետևյալ **2 պահանջի միաժամանակյա առկայության** դեպքում, եթե՝

1) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի նոր ընկալում, այսինքն՝ **սահմանադրության դրույթի (սահմանադրական նորմի) նորմի նոր բովանդակություն, ընկալում**, ինչը իրավունքի զարգացման, դինամիզմի արդյունք է, և
2) հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն, այսինքն՝ այստեղ կարևորվում է հարցի, **հիմնախնդրի կարևորության աստիճանը, սկզբունքային լինելը:**

Հետևաբար, եթե դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ նախկինում կայացրած որոշման **վերանայման համար**, ապա ՀՀ սահմանադրական դատարանը գնահատում է վերը նշված 2 պահանջի միաժամանակյա առկայության հարցը: Ենթադրենք այնպիսի դեպքում, երբ **առկա է կիրառված սահմանադրական դրույթի նոր ընկալում,** բայց **հարցը չունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն**, ապա որոշումը չի վերանայվի:

Նկատենք, որ թե՛ «**սահմանադրական դրույթի նոր ընկալում»,** թե՛ «**հարցի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն»** ձևակերպումները գնահատողական են:

Նոր իրավունքների ամրագրումը կամ դրանց վերաիմաստավորումը, ի թիվս այլ գործոնների, կապված է նաև **իրավունքի զարգացման** հետ: Իրավաբանական գրականության մեջ երբեմն նշվում է **իրավունքի կայուն զարգացման** մասին[4]:

Իրավունքի զարգացումը կապված է նաև **ժամանակի հետ,** քանզի այդ փոփոխությունը տեղի է ունենում ժամանակի ընթացքում, ավելին՝ այն ժամանակի

[4] Տե՛ս http://cisdl.org/public/docs/What%20is%20Sustainable%20Development.pdf:

պահանջի արդյունքում է ծավալվում, իսկ ժամանակը, ինչպես նշում է Ժան Լուի Բերժելը, **էվոլյուցիայի և կայունության գործոն** է[5]:

Կարծում ենք՝ իրավունքի զարգացման արդյունք են նաև **սերունդների իրավունքները**[6]:

Անդրադառնալով սերունդների իրավունքների դասակարգմանը, որը, կարծում ենք, ժամանակավրեպ է և միայն որոշ տեսական ուսումնասիրությունների ժամանակ է օգտագործվում, նշենք, որ, ըստ Տ. Լանդմանի, առաջին, երկրորդ և երրորդ սերնդի իրավունքների շրջանակում հաշվվում է 58-64 իրավունք[7]:

Չքննարկելով յուրաքանչյուր սերնդի իրավունքների առանձնահատկություն-ները՝ նշենք, որ **սերունդների իրավունքները տարբերվում են իրենց պաշտպանության մեխանիզմներով**, օրինակ՝

- ✓ առաջին սերնդի իրավունքները **հիմնականում բացարձակ են, սահմանափակման ենթակա չեն,** և **պետությունը պարտականություն ունի** ապահովելու այդ իրավունքների արդյունավետ իրականացումը, օրինակ՝ կյանքի իրավունքը,
- ✓ երկրորդ սերնդի իրավունքները **կարող են սահմանափակվել**, քանզի այդ իրավունքների իրականացումը կապված է **պետության հնարավորությունների հետ**, օրինակ՝ սոցիալական իրավունքները,

---

[5] Տե՛ս Бержель Жан-Луи, Общая теория права, под общей редакции В. Даниленко, перевод с французского Г. Чуршукова, Москва, 2000, стр. 200.

[6] Իրավաբանական գրականության մեջ առկա են մարդու իրավունքների դասակարգման տարբեր համակարգեր, օրինակ՝

- ✓ դասական (**պետության նեգատիվ պարտավորություն**) և սոցիալական իրավունքներ (**պետության պոզիտիվ պարտավորություն**),
- ✓ **կոլեկտիվ և անհատական** իրավունքներ,
- ✓ **իրավունքներ և ազատություններ**,
- ✓ քաղաքացիական և քաղաքական (**առաջին սերունդ)** իրավունքներ,
- ✓ սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ **(երկրորդ սերունդ),**
- ✓ ժողովրդի, կոլեկտիվ իրավունքներ **(երրորդ սերունդ),** (Տե՛ս Морозова Л., Теория государства и права, учебник, 4-е издание, Москва, 2012, стр. 146.):

[7] Տե՛ս Landman T., Studyng Human Rights, New York, 2006, page 16.

✓ երրորդ սերնդի իրավունքներն արդեն ենթադրում են ոչ միայն **պետության ինստիտուցիոնալ օժանդակություն**, այլ նաև անհրաժեշտ է որոշակի չափով **սահմանափակել** (երբեմն անվանվում է «պոզիտիվ սահմանափակում») առաջին կամ երկրորդ սերնդի իրավունքները, օրինակ՝ առողջ և մաքուր միջավայրում ապրելու իրավունքը՝ որպես հավաքական իրավունք, ենթադրում է, որ **հնարավորինս պետք է սահմանափակվի անտառների օգտագործումը,** աշխատանքի իրավունքը[8]:

Բացի այդ, այսօր միատեսակ մոտեցում առկա չէ մարդու իրավունքների չորրորդ սերնդի վերաբերյալ: Ոմանք նշում են, որ դրանք այն իրավունքներն ու ազատություններն են, որոնք կապված են **կլոնավորման, բիոլոգիայի ոլորտից բխող հարցերի իրավական կարգավորմանը**, ոմանք այդ իրավունքները դասում են **առաջին սերնդի իրավունքների շարքը**, ոմանք նշում են, որ դրանք այն իրավունքներն ու ազատություններն են, որոնք կապված են **տեղեկատվության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների հետ**[9]: Երբեմն էլ նշվում է, որ չորրորդ սերնդի իրավունքները կապված են **գենային ինժեներիայի հետ**, այդ իրավունքները պատկանում են ոչ թե անհատին կամ կոլեկտիվին, այլ **ամբողջ մարդկությանը**[10]:

Հավելենք, որ իրավաբանական գրականության մեջ դեռևս հստակ մոտեցում չկա՝ մարդու սոմատիկ իրավունքներն առանձին խումբ իրավունքներ են (որպես չորրորդ սերնդի իրավունքներ), թե առաջին սերնդի իրավունքներից բխող իրավունքներ[11]:

Ընդգծելով, որ այսօր գիտական բանավեճային շրջանակում է գտնվում չորրորդ սերնդի իրավունքների հարցը, միևնույն ժամանակ պետք է փաստել, որ

---

[8] Տե՛ս Cornescu A., The generations of human's rights, days of law: the conference proceedings, 1st edition. Brno, Masaryk University, 2009, p. 6:

[9] Տե՛ս Рудинский Ф., Права человека в современном мире, Марксизм и современность, N 1 (15), Москва, 2000, стр. 37-49.

[10] Տե՛ս Cornescu A., The generations of human's rights, days of law: the conference proceedings, 1st edition. Brno, Masaryk University, 2009, p. 7:

[11] Տե՛ս https://mitso.by/web/uploads/ckeditor/1510126492.pdf:

գիտատեխնիկական առաջընթացը (հատկապես՝ բժշկության, գենետիկայի ոլորտներում) ստիպում է, որպեսզի ուսումնասիրենք նոր սերնդի իրավունքների կարգավորման հարցերը, ընդ որում՝ սրանք այն իրավունքներն են, որոնք բխում են մարդու անձեռնմխելիությունից, այդ իրավունքների հենքն առաջին և երկրորդ սերնդի իրավունքներն են, որոշ դեպքերում պայմանավորված են բժշկագիտության, գենային ինժեներիայի զարգացումներով, ենթակա են պոզիտիվացման:

Անհրաժեշտ է հստակ ամրագրել այդ իրավունքների պաշտպանության մակարդակը, այդ իրավունքներին պետության միջամտության սահմանները: Տեղին է հիշել պրոֆեսոր Գ. Սաֆարյանի այն տեսակետը, որ **իրավունքը և իրավական կարգավորումը** հասարակական հարաբերությունների սոցիալական կանոնակարգման **հիմնական միջոցներն** են[12]:

Հետաքրքրական է նաև իրավագետ Ֆ. Ռիբավեմի տեսակետը, ով, անդրադառնալով տարբեր իրավական թեմաների ուսումնասիրման անհրաժեշտությանը, ընդգծում է, որ բիոտեխնոլոգիայի տեսանելի զարգացումները, հատկապես վերջին երկու տասնամյակում, **թույլատրում և պահանջում են դասական իրավական ինստիտուտների վերանայում**[13]:

---

[12] Տե՛ս Սաֆարյան Գ., Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (պատմա-տեսական վերլուծություն), Երևան, 2004, էջ 69:

[13] Տե՛ս Rivabem F., Biodireito: uma disciplina autônoma?, 2017, http://scielo.br/scielo.php?script=sci_arttext&pid=S1983-80422017000200282&lng=pt&tlng=pt: